ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ *Հայոց լեզու և գրականություն*

Թեմա՝ *«Ինքնակենսագրական վեպի ուսուցումը (Վ. Թոթովենց, Գ. Մահարի)*

Կատարող՝ *N 137 հիմնական դպրոցի ուսուցչուհի՝ Հասմիկ Սահակյան*

Ղեկավար՝ *բան.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Սուրեն Դանիելյան*

ԵՐԵՎԱՆ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

Ինքնակենսագրական վեպի ուսուցումը.....5

1.Ժանրային նկարագիր.....5

2.Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը...6

3. Բնագրի հետ աշխատանք ու մեթոդներ.....9

4. Գուրգեն Մահարու ինքնակենսագրական պատումը.....11

5. Դասավանդման առանձնահատկություններ.....13

Եզրակացություններ.....14

Գրականություն.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում կրթական հայեցակարգերի հիմքում դրվում են սովորողների որոշակի կարողությունների ու հմտությունների, գիտելիքի ու աշխարհի նկատմամբ համապատասխան վերաբերմունքի ու արժեքային համակարգի ձևավորման, զարգացման ու կատարելագործման պահանջները: Առանձնահատուկ կարևորվում են նաև ժողովրդավարական, անձնակենտրոն և տարբերակված մոտեցումները: Հայեցակարգային այս ուղենիշերը կամ հիմնական սկզբունքները ճիշտ կազմակերպված ու նպատակային ուսուցման պարագայում լավագույնս կարող են իրացվել ու դրսևորվել հայ գրականության ուսումնասիրության ժամանակ:

Գրականությունը՝ որպես արվեստի տեսակ, իր առանձնահատկություններով ու հոգեբանական ներազդեցության մեծ ուժով, սովորողների աշխարհայացքի ձևավորման առաջնային միջոց կարելի է դիտարկել: Այս պարագայում անչափ կարևոր է գրականության ուսումնասիրության հիմնական նպատակների ու արդյունքների ընկալումն ու սահմանումը: Այսպես՝

1. Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու բնագրի ենթիմաստները, գաղափարական ուղղվածությունը, մոտենալու հեղինակային մտահղացմանը, քննարկելու հերոսների արարքների շարժառիթներն ու դրդապատճառները: Սա էլ իր հերթին կօգնի ավելի ճիշտ գնահատելու իրականությունը, ընկալելու հասարակական հարաբերությունների բազմազանությունը: Կնպաստի երեխաների՝ շրջապատի հետ ճիշտ հարաբերությունների հաստատմանը, հասարակական առողջ շփման ձևավորմանը, կխթանի հաղորդակցումը:
2. Գրականության խորքային ընկալումը, կնպաստի ընթերցանության զարգացմանը, որն էլ իր բարերար ազդեցությունը կունենա բանավոր ու գրավոր խոսքի զարգացման ու կատարելագործման վրա:

3. Գրականության ուսումնասիրությունը միտված է սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը։
4. Գրականությունը մարդուն և աշխարհին ճանաչելու բացառիկ ձև է։ Ճանաչելով աշխարհը՝ մարդը հարգանքով է վերաբերվում իր և օտար մշակույթների նկատմամբ, ձգտում ճանաչել իրենից տարբերին։
5. Գրական բնագրերի լեզվաոճական վերլուծությունը զարգացնում է աշակերտի լեզվամտածողությունը։ Նպաստում տրամաբանական մտածողության ձևավորմանը։

Ըստ այդմ էլ՝ վերոգրյալ նպատակների ու արդյունքների հիման վրա կարելի է սահմանել գրականության ուսումնասիրության վերջնարդյունքները։ Գրականության հանրակրթական պետական չափորոշիչի դրույթների, պահանջների, նշված կարողունակությունների հիման վրա սահմանվել են հիմնական և ենթահասկացություններ։ Այս հասկացություններին համապատասխան էլ տարիքային յուրաքանչյուր խմբի համար սահմանվում են 4-5 կետից բաղկացած չափորոշիչային հստակ պահանջներ։ Այս չափորոշիչները սովորողի կարողունակությունների ձեռքբերման ու գնահատման հիմքն են։ Այսինքն՝ ուսուցիչը միավորային գնահատման սանդղակը կազմելու է յուրաքանչյուր դասարանի համար սահմանված վերջնարդյունքների հաշվարկով։

Այժմ երկչափ կրթությունից անցում է կատարվում եռաչափ կրթությանը, այն է՝ *հասկացություն-գիտելիք-կարողություն/հմտություն։* Կարևորվում են նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսին են՝ ընթերցանությունը, ստեղծարարությունը և ինքնուրույնությունը։

Շատ կարևոր է ծրագրային-չափորոշիչային պահանջների համադրությունը հետազոտական աշխատանքներին ու դասավանդման ընթացքին։

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է 20-րդ դարի հայ գրականության երկու ինքնատիպ հեղինակների՝ Վ. Թոթովենցի և Գ. Մահարու

ինքնակենսագրական բնույթի ստեղծագործությունների հետազոտությունը, դրանց դասավանդումը՝ սահմանված չափորոշիչների ու նախատեսվող վերջնարդյունքների համապատասխանությամբ։

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ (Վ. ԹՈԹՈՎԵՆՑ, Գ. ՄԱՀԱՐԻ)

1. Ժանրային նկարագիր

Հանրակրթական դպրոցի «Հայ գրականություն» առարկայի նոր ծրագրով նախատեսված է Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ստեղծագործության և Գուրգեն Մահարու «Պատանեկություն» վեպի հատվածների ուսուցումը։ Պետք նշել նաև, որ Վ. Թոթովենցի վեպից մեկ հատված ընդգրկված է նաև 6-րդ դասարանի «Մայրենիի» դասագրքում։ Հետևաբար, երեխաները արդեն որոշ, թեև շատ ընդհանուր գծերով ծանոթ են Վ. Թոթովենցի վիպակին։

Ինքնակենսագրական վեպի ժանրային ու թեմատիկ հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են հեղինակի կենսագրության հետ հարաբերությամբ, հետևաբար այս ստեղծագործությունների ուսուցման առաջին քայլը հեղինակի կենսագրության առնվազն համառոտ ներկայացումն է։ Սակայն մինչ այդ անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում տալ վեպի այս ենթատեսակի մասին։ Ինքնակենսագրական վեպերին բնորոշ է հեղինակի կյանքի մասին տեղեկատվության բացահայտումը։ Այս ստեղծագործություններում հեղինակները ներկայացնում են իրենց կյանքի մեծ կամ փոքր շրջաններ, որոշակի շրջադարձային իրադարձություններ, հուշեր, ձեռքբերումներ, հաջողություններ ու ձախողումներ, սիրային պատմություններ և այլն։ Որպես կանոն անձնական բնույթի տեղեկատվությունը ներկայանում է հասարակական հարաբերությունների, ազգային ճակատագրի ու պատմության համադրությամբ՝ գեղարվեստական վերացարկվածության որոշակի մակարդակով։ Հեղինակները բերում են իրենց ինքնատիպ աշխարհները, միաժամանակ իրենց ապրած ու տեսած երկրի, իրենց սերնդի ծանր

ճակատագրի պատկերը։ Այս ամենի շնորհիվ անհատի կյանքի պատմությունը ձեռք է բերում նաև հասարակական հետաքրքրություն։ Վ. Թոթովենցի, Գ. Մահարու, Ստ. Զորյանի, Զ. Եսայանի ինքնակենսագրական վեպերը այս ենթաժանրի ինքնատիպ դրսևորումներ են, որոնք պատմելով անհատի մասին, միաժամանակ ստեղծում են նրանց սերնդի ու ապրած ժամանակի գեղարվեստական պատկերը։

2. Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը

Ինչպես նշեցինք, ինքնակենսագրական վեպի ուսումնասիրության առաջին քայլը, հեղինակի կենսագրության հետ հարաբերության ճշտումն է, իսկ դասվանդման ընթացքում այս խնդիրը կարելի է լուծել հեղինակի կենսագրության ներկայացմամբ։

Այսպես, Վ. Թոթովենցը ծնվել է Խարբերդի Մազրա(Մեզիրե) քաղաքում։ Նրանց տունը գտնվում էր հին հռոմեական ճանապարհի վրա։ Վահանի հայրը՝ բարձրաստիճան պաշտոնյա էր, հարուստ մարդ, սակայն ապրում էր համեստ կենցաղով։ Վ. Թոթովենցը վաղ հասակից տարվել է պոեզիայով, հատկապես հիացել ու ազդվել Պ. Դուրյանից ու Մ. Մեծարենցից։ Նրա գրական ուսուցիչներն են եղել արձակագիրներ Թլկատինցին և Ռ. Զարդարյանը։

Գրել է ոտանավորներ, որոնցից առաջինը հրատարակվել է 1907 թվականին Զմյուռնիայում։ 1908 թվականից սկսվում է նրա որոնումների շրջանը. Կ. Պոլիս, Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա, ԱՄՆ։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերադառնում է Կովկաս, մտնում Զորավար Անդրանիկի զորախումբ։ 1920 թ. հեղինակը մեկնում է ԱՄՆ, ապա վերդառնում Հայաստան։ Ամերիկյան տպավորությունները ամփոփվում են հեղինակի պատմվածքներում, ակնարկներում և վիպակներում։ Թոթովենցի տաղանդը սակայն լավագույնս դրսևորվում է հատկապես մանկությանն ու պատանեկությանը նվիրված ստեղծագործություններում։ Գրվում է «Բաց կապույտ ծաղիկներ» վիպակը, որն աչքի է ընկնում բնական պատումով ու կյանքի ուշագրավ պատկերներով։ 1930 թ. «Նոր ուղի» ամսագրում տպագրվում է

«Կյանքը հին հռովմեական» ճանապարհի վրա վեպի կրճատ տարբերակը, իսկ 1933-ին՝ ամբողջականը։

Ինչպե՞ս է պատկերում հայրենի գյուղաքաղաքը հեղինակը։ Պետք է ասել, որ տասնամյակներ անց հեղինակը հայրենիքը տեսնում ու պատկերում է զուլալ ու պայծառ։ Կորսված հայրենիքը թերևս այլ կերպ պատկերելը հոգեբանորեն դժվար էր և քաղաքականապես վտանգավոր. «Եթե Գուրգեն Մահարու վիպակներում ընդգծվում են քաղաքական ողբերգության ծանր հետքերը մանուկ կյանքի վրա, …ապա Վահան Թոթովենցը պատկերում է գյուղաքաղաքի բարքերը, կենցաղը, բարոյական հարաբերությունները»[1], -նշում է Հր. Թամրազյանը։

Ըստ այդմ էլ՝ այստեղ գեղարվեստականը գերակշռում է վավերականությանը։ Ուշագրավ են մանկության մասին գրող Մահարու ու Թոթովենցի ոճի տարբերությունները։ Մահարին նախընտրում է թախծոտ նրբերանգները, թեև ամենատխուր պահի մեջ էլ կա հումոր ու ժպիտ։ Թոթովենցը գրում է ավելի «ռոմանտիկ», արևելյան խտացած գույներով։ «Կյանքը հին հռովեմական ճանապարհի վրա» վիպակը նաև սփյուռքահայ գրականության չափանիշներով իսկական կարոտի գրականություն է, որովհետև պատմում է թուրքերի ձեռքով բնաջնջված իր հայրենի քաղաքի իր ընտանիքի մասին։ Այս վիպակում կա նաև ակնարկ եղեռնի մասին»[2], -գրում է գրականագետ Ա. Եղիազարյանը։

Իրադարձություններն ու շրջակա աշխարհը բեկվում են մանկան հայացքում։ Սակայն անձնականը ձեռք է բերում համամարդկային նշանակություն, քանի-որ խոսքը համընդհանուր արժեքների մասին է։

Հերոսի ընտանիքը՝ արիստոկրատ հայրը, աստվածավախ մայրը։ Հայրը՝ երկաթե կամք ուներ, կանխազգում է իր մահը և նույնիսկ դագաղ պատվիրում։ Հոր թաքնված տխրությունը բացահայտում է նրա ներաշխարհը։ Ուրիշ էր մայրը՝ գեղեցիկ, բարի, կենսասեր, հավատարիմ ընտանիքին նույնիսկ այն դեպքում, երբ իմանում է

[1] Թամրազյան Հր. , Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1984, էջ 418։
[2] Եղիազարյան Ա., Հայոց նորագույն գրականության պատմության ուրվագիծ, Երևան, 2004, էջ 244։

ամուսնու սիրուհու մասին։ Զգացմունքային ու ազդեցիկ է ներկայացվում մոր մահը։ Այս հատվածը կարելի է առանձին ընթերցել ու վերլուծել դասարանում։ Աշխարհը ցուրտ է, սակայն կա մոր ժպիտը. «Եվ բացվում է մի մեծ առավոտ, որի թևերը ոսկեզօծում են իմ հոգու մռայլ ակունքները…։ Արևի միջից լսում եմ նրա ձայնը։ Մայրս գնաց արևի հետ։ Սպասում եմ առավոտին, սպասում եմ, որ մայրս կգա նորից արևի հետ, հակինթյա սրինգով»[3]։

Սովորողների ուշադրությունը պետք է հրավիրել, թե ինչպես են այս նուրբ պատկերները հակադրվում իրականության դաժանությանը և ընթերցողը սկսում է ապրումակցել հերոսին։ Աղետներն ու ողբերգությունները հաջորդում են մեկ մյուսին։ Ընտանիքի հետ միասին տեսնում ենք նաև այլ կերպարներ. «աղբվնիկ» պահող վարսավիր Հակոբը, եղբայրներ Վահրամն ու Հրաչը, նորապսակ Հաջի Սողոմոնը, «անգլիախոս, էշ» Հովհաննեսը և այլք։

Դասագրքում տրված է այն հատվածը, երբ մայրն առաջին անգամ մանկանը բերում է լուսնի դեմ ու վախեցնում իր չար տղային։ Սակայն որդին, նայելով մոր ուղղությամբ, հմայվում է լուսնյակով ու բնության հրաշքով։ Այս առինքնող պատկերը հավերժ դաջվել է հեղինակի հիշողության մեջ և դարձել վիպակի գեղեցիկ հատվածներից մեկը։

6-րդ դասարանի դասագրքում ընդգրկված այս հատվածը ուսուցչին հնարավորություն է տալիս քննարկելու սովորողների հետ նրանց վառ հուշերը։ Արդյո՞ք դրանք նրանք փորձել են թղթին հանձնել, ինչպե՞ս կպատմեին այդ մասին, եթե այդպիսի հնարավորություն լիներ։ Եվ թերևս ամենակարևոր հարցը, որը կարելի է քննարկել դասի ժամանակ. մարդու կյանքի այս կամ այն դրվագը, ինչ ազդեցություն է ունեցել նրա ձևավորման ու հետագա կյանքի վրա։ Այս վիպակը սովորեցնում է երեխաներին ուշադիր լինել շրջապատի, ընտանիքի նկատմամբ, սիրել ու գնահատել մերձավորներին։ Նաև այն հնարավորություն է տալիս հիշել ծնողների, տատիկ-

[3] Թոթովենց Վ. , Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա, Երևան, 2015, էջ 23-24։

պապիկների իմաստուն խոսքերը, առած-ասացվածքները, գրառել դրանք ու ներկայացնել դասարանում:

Մինչ այս թեման սկսելը կարելի է աշակերտներին հանձնարարել զույգեր կազմել ու միմյանց պատմել իրենց կյանքի հետաքրքիր ու հիշվող դրվագներ, ապա մեկը մյուսին ներկայացնի ըստ նրա պատմածի: Վերջում ուսուցիչը կարող է ինքն իր մասին պատմել:

3. Բնագրի հետ աշխատանք ու մեթոդներ

Բնագրի հետ աշխատանքը կարելի է կառուցել այսպես. ուսուցիչը կարդում է մի փոքրիկ հատված, պարբերություն վիպակից (գրքերը փակված են), ավարտին աշակերտները փորձում են ուղղորդող հարցերով գուշակել ստեղծագործության թեման ու բնույթը: Հետո ուսուցիչը ցուցադրում է Վ. Թոթովենցի լուսանկարը և փորձում է ճշտել, թե որքանով է ըստ աշակերտների հեղինակի արտաքինը համապատասխանում նրա ստեղծագործությունից ստացված տպավորությանը: Ապա ուսուցիչը ներկայացնում է հեղինակի կենսագրությունը և երեխաները փորձում են համեմատել ընթերցված հատվածից ու կենսագրությունից ստացած տպավորությունը: Իհարկե, լինում են և՛ համապատասխանություններ, և՛ անհամապատասխանութ-յուններ, քանի որ, այդուհանդերձ, գործ ունենք ոչ թե արխիվային փաստաթղթերի, այլ գեղարվեստական պատումի հետ: Գեղարվեստն ու վավերագրությունը լրացնում են միմյանց:

Թեման ուսուցանելու ժամանակ ուսուցիչը կիրառում է նյութի ներկայացման տարբեր մոտեցումներ: Ընդունված ու արդյունավետ գործիք է ԽԻԿ համակարգը: Աշակերտների կարելի է հանձնարարել պատրաստել վահանակ կամ ալբոմ՝ իրենց վաղ մանկության նկարներով: Այս աշխատանքը կարող է դառնալ նաև գործնական աշխատանքի հիմք:

Աշակերտները կարող են գունավոր, կպչուն թղթերի վրա գրել իրենց մանկության ամենահիշարժան դեպքը՝ ուրախ կամ տխուր: Կպչուն թղթերը պետք է փակցնեն գրատախտակին, ապա ընդհանուր քննարկմամբ կարելի տեսնել՝ արդյո՞ք կան դեպքեր, որ աշակերտների հետ պատահածները համընկնում են:

Շատ կարևոր է բնագրային աշխատանքը: Թոթովենցի լեզուն հարուստ է, պատումի ոճը գեղեցիկ: Կարելի է հանձնարարել աշակերտներին առանձնացնել իրենց նախընտրած հատվածների բառապաշարը, գեղարվեստական արտահայտության միջոցները, ապա հաջորդ դասերին փորձել դրանք վերարտադրել որպես հեղինակ, կամ այդ ամենի ականատես:

Առանձնահատուկ պետք է անդրադառնալ կերպարներին, հատկապես մոր կերպարին, փորձել նկարագրել: Ապա կարելի է համեմատություն անցկացնել վեպի պատմող հերոսի մոր և նյութը ներկայացնող երեխայի մոր միջև (նմանություն և տարբերություն):

Կարելի է օգտվել «Բառաբաժան» մեթոդից՝ տալով հայտնի հարցադրումները զգայական ու զգացական պատկերացումների ֆոնի վրա:

Կարելի է կիրառել «Բազմանիստ» կամ «Բուրգ» մեթոդը: Երեխաներին առաջարկել վերհիշել կամ անդրադառնալ մոր կերպարին հայ կամ համաշխարհային արվեստում՝ գրականություն, կերպարվեստ, երաժշտություն:

Ընտրել նկարագրական հատվածներ (բնանկար, դիմանկար, առարկայական աշխարհ), դրսևորել դատողական կամ հուզական վերաբերմունք:

Կազմել փոքրիկ կապակցված խոսք այդ բառերով կամ բառակապակցություններով:

Այլ աշխատանքներ նույնպես կարելի է իրականացնել: Օրինակ, ընթերցել բնագրային հատվածներ ուսուցչի ընտրությամբ, հանձնարարել հատվածների անգիրներ:

Այս աշխատանքները միտված են սովորողի բառապաշարի հարստացմանը ու երևակայության զարգացմանը, ինչպես նաև կնպաստեն ընթերցանության սովորության ձևավորմանը:

4. Գուրգեն Մահարու ինքնակենսագրական պատումը

Ինչպես նախորդ դեպքում էր, մինչ գործերին անդրադառնալը, ուսուցիչը պետք է համառոտ ներկայացնի հեղինակի կենսագրությունը: Հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը կարող է դասարանում ցուցադրել հեղինակի դիմանկարը, իսկ աշակերտները փորձեն գուշակել նրա բնավորությունը: Ապա հուշագրական գրկանության ներկայացմամբ կարելի է ճշտել տպավորությունները: Գուրգեն Մահարին (Աճեմյան, 1903-1969) ծնվել է Վան քաղաքում: Հայրը՝ Գրիգորը և հորեղբայրը ուսուցիչներ էին: Քաղաքական-կուսակցական պայքարի զոհ է գնում ապագա գրողի հայրը: Այս իրադարձությունը մեծ ազդեցություն է թողնում երեխայի վրա: Գուրգենին խնամել է տատը: Հաճախել է Վանի Նորաշեն և Երեմյան վարժարաններ: Սկսվում է Առաջին աշխարհամարտը, ապա տեղի է ունենում Եղեռնը: Վանում ինքնապաշտպանական կռիվներ են լինում, սակայն հաջորդում է գաղթը Արևելյան Հայաստան: Ճանապարհին Գուրգենը կորցնում է տատին ու քրոջը, մորն ու եղբայրներին: Գուրգենը լինում է Իգդիրում, Էջմիածնում, Դիլիջանում, Երևանում: Այս դեգերումների ժամանակ հանդիպում է Հ. Թումանյանին և Ե. Չարենցին: Այս ճանապարհներին էլ նա սկսում է առաջին ոտանավորները գրել: Արդեն Խորհրդային Հայաստանում Մահարին ակտիվ գրական-հասարակական գործունեություն է ծավալում, վայելում Չարենցի մտերմությունն ու աջակցությունը:

Մահարու կյանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել նրա՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», հետագայում՝ «Ծաղկած փշալարեր» և «Այրվող այգեստաններ» երկերում, նաև բանաստեղծություններում՝ «Մրգահաս» ժողովածուում և այլ գործերում: 1930-

ականների Մահարին քաղաքական հալածանքների է ենթարկվում: Գրողը երկու անգամ աքսորվում է՝ 1936-ին և 1949 թվականներին: Այս ծանրագույն կյանքը սակայն չի կոտրում և հուսահատեցնում գրողին, նա շարունակում է ստեղծագործել: Մեծ աղմուկ է բարձրացնում նրա «Այրվող այգեստաններ» վեպը: Գրողը մահացել է 1969 թվականին:

Կենսագրությունը ներկայացնելուց հետո ուսուցիչը կանգ է առնում «Մանկություն» վիպակի վրա: Այստեղ է, որ հեղինակը սահմանում է անցյալին անդրադառնալու իր նպատակն ու գրելու կերպը. «Տարիները աղոտել են շատ բան: Օ՜, այո, շատ գծեր են ջնջվել, շատ պայծառ դեմքեր մշուշվել: Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող ոսկե մակույկից...: Հիշել եմ ուզում, վերհիշել ու գրել, գրել հեշտ ու թեթև, գրել և զգալ, քունքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծառ, պայծառ, այս քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման»: Եվ հեղինակին հաջողվում է շատ բան փրկել իր մանկության մշուշներից: Որբանոցի կյանքը, տատիկի՝ Յուղաբերի, գունագեղ հեքիաթները, փոքրիկ Գուրիսի պատկերացումները, նրա պատրաստակամությունը: Այս փոքրիկ պատմությունները չեն կարող չզվարճացնել ընթերցողին: Դրանք պատկերացում են տալիս Վանի հայերի ընտանեկան հարաբերությունների և կյանքի մասին: Այս ամենի մեջ երևում է նաև Մահարու վերաբերմունքը քաղաքական իրավիճակին, կուսակցական գործունեությանը, մոր այրիանալը, գաղթը, տատիկի անեծքը:

Մահարու վիպակներում անբաժան են ողբերգականն ու հումորը, սա հեղինակի արձակի յուրահատկությունն է: «Պատանեկության» մեջ երևան է գալիս նրա ընտանիքի ամբողջ պատմությունը: Դեգերումների շղթան փակվում է Հյուսիսային Կովկասում, որտեղ հերոսը հանդիպում է ընտանիքին: Հուզիչ է որբանոցային կյանքի նկարագրությունը:

Շատ գեղեցիկ է Մահարու պատումի ոճը: Կարելի է հիշել մի ինքնատիպ բնորոշում տրված այդպիսի արձակին. «...հեղինակի արձակը ակոսված է

բանաստեղծի խոփով»: Այսպես կարող ենք ասել նաև Մահարու արձակի մասին: «Եթե մանկությունը ժպտում է, ծիծաղում է պատանեկությունը, մանկությունը կապույտ է, իսկ պատանեկությունը՝ կապույտն է ու ոսկին....: Արծաթ և հստակ ջրերում սուզվեց իմ մանկության ոսկե մակույկը և ես եկա պատանեկության ափը»[4]:

5. Դասավանդման առանձնահատկություններ

Ինքնակենսագրական պատումների այսպիսի ընդարձակ շարքի ուսուցումը դպրոցում լուրջ ուսումնասիրություն է պահանջում: Ուսուցիչը պետք է կիրառի տարբեր մեթոդներ ու մոտեցումներ՝ «Մտագրոհ», «Կարճ դասախոսություն», «Բազմանիստ», «Ուղղորդված ընթերցանություն», «Շրջագայություն գրքի էջերով», «Վենի դիագրամ», «Հեղինակի աթոռ»: Դասը կարող է լինել համակցված:

Ուսուցիչը կարող է լրացուցիչ հանձնարարություն տալ կարդալ բնագրային հատվածներ և պատմել տատի, քրոջ և հոր մասին: Հետաքրքիր և արդյունավետ մեթոդ է հարցազրույցը, որը վարում են երկու աշակերտ՝ «լրագրողը» և հեղինակը: Հարցազրույցը բացահայտում է հեղինակի կյանքի մանրամասները: Մահարու «Ինքնակենսագրականը» ամփոփում է գլխավոր մտքերն ու գաղափարները, որոնք կներկայացնեն աշակերտները: Օրինակ, կարելի է կարդալ ու մեկնաբանել հետևյալ հատվածը՝ «Այդ ութ տարիների ընթացքում ես հասկացա, որ մարդն ավելի դիմացկուն է, քան քարը», կամ «Իմ անձնական փորձով ես եկա նաև այն ընդհանուր եզրակացության, որ գրողը պիտի գրի ապրած նյութի մասին»[5] և այլն:

Ուսուցիչը պետք է անդրադառնա նաև վերջին հատվածին, որտեղ հեղինակը խոսում է ահեղ Եհովայի մասին: Ուշագրավ է, նրա հարցը և հեղինակի պատասխանը, որ ինքը կապրեր այնպես, ինչպես ապրել է:

---

[4] Մահարի Գ., Երկերի ժողովածու, հ.2, Երևան, 1967, էջ 55:
[5] Գասպարյան Դ., Գրականություն 7, Երևան, 2016, էջ 126:

Դասերի ժամանակ կարելի է այլ առաջադրանքներ ևս տալ: Օրինակ, գրել շարադրություն վիպակների հերոսների, Մահարու ծննդավայրի մասին: Կարելի վիպակում ներկայացվող իրադարձությունները մեկնաբանել Եղեռնի պատմության ներկայացմամբ: Մեկնաբանել Մահարու խոսքը՝ «Ժպտալով էլ կմեռնեմ»:

Գծել Վենի դիագրամ՝ համեմատելով Մահարու «Մանկություն» և «պատանեկություն» գործերը:

Դասերը կարելի է ամփոփել հետևյալ հարցադրումներով՝

1. Ի՞նչ իմացանք:

2. Գործերը ավելի լավ հասկանալու համար պետք է արդկո՞ք իմանալ Մահարու կենսագրությունը:

3. Ո՞րն է ավելի հետաքրքիր՝ փաստերով կյանքը, թե հիշողություններն ու գեղարվեստական արտացոլումը:

Վերջում հանգում ենք եզրակացության, որ մարդը ուժեղ է և կամային և կհաղթահարի բոլոր դժվարությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ինքնակենսագրական վեպի Գ. Մահարու և Վ. Թոթովենցի փորձառությունը և այդ վեպերի ուսուցման առանձնահատկությունները, հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Ինքնակենսագրական վեպը ուշագրավ ու հետաքրքիր ենթաժանր է, որն ուսումնասիրության, հատկապես միջառարկայական կապերի լայն հնարավորություններ է տալիս:
2. Քննվող գործերը առանձնանում են այս ժանրի մյուս դրսևորումներից իրենց գեղարվեստական առանձնահատկություններով, ստեղծաբանությամբ ու ազդեցությամբ:

3. Այս վեպերի ուսուցումը շատ կարևոր է և հնարավորություն է տալիս սովորողներին հասկանալու վավերագրության՝ փաստերի և գեղարվեստական արտացոլման յուրահատկությունները:
4. Այս բարձրարժեք գեղարվեստական գործերի ուսումնասիրությունը կարող զարգացնել երեխաների բառապաշարն ու երևակայությունը, խթանել ընթերցանության սովորության ձևավորմանը:
5. Այս գործերին ծանոթացումը և դրանց ընկալումը նաև դաստիրակչական կարևոր նշանակություն ունի. հեղինակների կենսական փորձառությունը, իրականության նկատմամբ վերաբերմունքը կարող է օգտակար լինել աշակերտների կյանքում: Գիտելիքներ տալ մեր ժողովրդի պատմության ու մշակույթի մասին, սեր սերմանել հայրենիքի, ընտանիքի նկատմամբ: Հնարավորություն տալ նրանց ավելի սթափ գնահատելու իրականությունը, լինել ուժեղ, կամային ու լավատես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Դ., Գրականություն 7, Երևան, 2016:
2. Եղիազարյան Ա., Հայոց նորագույն գրականության պատմության ուրվագիծ, Երևան, 2004:
3. Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1984:
4. Թոթովենց Վ. , Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա, Երևան, 2015:
5. Թովմասյան Թ., Աբազյան Ս., Գրականություն 7 (մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, 2019:
6. Մահարի Գ., Երկերի ժողովածու, հ.2, Երևան, 1967: